ապահովութիւնը, որովհետև 7 ամիս է դրանք ռոճիկ չեն ստանում և ստիպուած են իրանց ապրուստը հայթայթել գողութիւններով... Իլդըզ-Քեօշկում դրութիւնը անօգնական է, քաղաքական շրջանները տրամադրուած են յոռետես կերպով, լուրեր են պտտւում պետութիւնների ծովային ցոյցի մասին Սոլունի առաջ։ Սոլունի բուլղարների տներում կատարուած խուզարկութիւների ժամանակ շատ ռուսբեր են գտնուել»։

Իտալիան և Աւստրօ-Ունգարիան արդէն նաւատորմիղներ են ուղարկել Սոլունի ջրերը։ Պարիզից հրաման է ուղարկուած Տուլոն՝ նաւերի զօրաբաժնին ուղևորել Սալոնիկի։ Ասում են թէ Իլդըզ-Քեօշկում տրամադիր են ուլտիմատում ուղարկել Բուլղարիային...

Լ. Ս.

26 ապր.

Մարտի 18-ին Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոս Սահակ Խապայեանը Միսիսից մեկնեց դէպի Սիս մեծ հանդիսով։

Ժամ 10-ին թափորը հասաւ Սսոյ կամուրջին։ Կաթողիկոսը կամուրջին վրայ կառքէն իջնելով միւթէսարիֆ փաշայի կողմէ ղրկուած զարդարուն թամբով ձին նստելով, թափորը դէպի Մայրավանք ուղղուեցաւ, դպիրք միշտ կ'երգէին. երբ թափորը վանքին հասաւ, քահանայք զգեստաւորեալ դիմաւորեցին։ Կաթողիկոսը ձիէն իջնելով ծանրագին չուրջառ և կաթողիկոսական գաւազան առաւ, չարականների երգերով և խնկարկութիւններով տաճարը մտաւ, սեղան իջնելով ուխտը կատարեց, վերջ ժողովրդին դառնալով գտած ընդունելութեան համար գոհունակութիւն յայտնեց։ Քարոզէ վերջ, միենոյն հանդիսաւորութեամբ վեհարանն իջաւ։ Հոն բարի գալստեան շնորհաւորութիւններն ընդունեց։ Գիշերը վանքին մէջ լուսաւորութիւնք եղան։

Կիրակոս և Մովսէս եպիսկոպոսները մարտի 23-ին շրջաբերական հանեցին, որ կաթողիկոսը ապրիլ 20 աշխարհամատրան կիրակին օծումը պիտի ընդունի և ապրիլ 27 կանաչ կիրակին ալ սրբալոյս մեռոնօրհնէք պիտի կատարէ։ Յիշեալ շրջաբերականէն Կիլիկիոյ բոլոր թեմերը ղրկուած է։

(Քաղուած է «Բիւզանդիոնից»)

„Собр. Узакон. и Распор. Правит."-ի մէջ տպուած է ռուսական և բուլղարական կառավարութիւնների մէջ կայացած համաձայնութեան մասին՝ Ռուսաստանի և Բուլղարիայի մէջ

պոստային դրամական փոխադրութիւնների վերաբերեալ։ Այդ համաձայնութեան զօրութեամբ իւրաքանչիւր փոխադրութեան գումար նշանակուելու է ուղարկողից այն երկրի դրամով, որտեղ յանձնւում է այն։ Պոստային վարչութիւնը հետեւեալ հաշւով պէտք է ընդունի դրամը—1 ռ.=2,87 ֆր. և 1 ֆր=37,5 կ.։